ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 նոյեմբերի 2025թ. **N 75-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 15.11.2025Թ. ԹԻՎ 72-Ա, 73-Ա, 74-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 10.11.2025Թ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 72-Ա, 73-Ա, 74-Ա որոշումներով հարուցված վարչական վարույթների շրջանակներում, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 10.11.2025թ. ստացված տեղեկությունների քննարկման առարկա են հանդիսացել ստորև ներկայացված հանգամանքները.

1) «Վարչախումբը գեբելսյան ստեր է տարածում և արհեստական աղմուկ ստեղծում. դիտորդ Արմեն Մանվելյան. https://www.facebook.com/reel/772359382472072»,

2) «Այս իշխանությունը բանտում է հայտնվելու, այլ տարբերակ չկա. դիտորդ Ցոլակ Ակոպյան. https://www.facebook.com/reel/647364191790232»,

3) «Իրավապահնե՛ր, ապօրինի հրամաններ մի՛ կատարեք, դատվելու՛ եք. դիտորդ Ավետիք Չալաբյան. https://www.facebook.com/share/r/1GBgU2tUKo/»,

4) «Մարդիկ պետք է գնան ընտրատեղամասեր, որ իշխանություն փոխվի. դիտորդ Արմեն Մանվելյան. https://www.facebook.com/share/r/15mrMRdNqb/»,

5) «Հայոց եկեղեցին փորձում են բնաջնջել միայն մեր թշնամիները և մեկ էլ Փաշինյանը. դիտորդ Արմեն Մանվելյան.
https://www.facebook.com/share/r/14PPmBRkwzU/?mibextid=wwXIfr»,

6) «Նիկոլիզմն ուղղակի բացեց ազգային ինքնության տիղմի սողանցքը. դիտորդ Արմեն Սավգուլյան https://www.facebook.com/share/p/1AT53b9AEu/»,

7) «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան» հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար Արման Թաթոյանի կողմից արված հայտարարությունները, որոնք զետեղված են հետևյալ հղումներով.

https://www.facebook.com/reel/2616872785346364»,
https://www.facebook.com/share/v/1D3VK6J1n9/»,
https://www.facebook.com/reel/772529669174189,
https://www.facebook.com/share/p/17mcHUwzqa/,
https://www.facebook.com/reel/846582124599945:
https://www.facebook.com/reel/775521165296404:

8) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Գոհար Մելոյանի հարցազրույցի տեսագրությունը (https://www.youtube.com/watch?v=Ulg6SHdb3us),

9) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Գառնիկ Դավթյանի գրառումը https://www.facebook.com/garnik.m.davt.yan/posts/pfbid02gP2coDaiW9DiiToRsrR4kTWp2NBpmp6JBG7eoEhXr1LRbsJkEutqAYe41dWPSfRjl,

10) «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Անդրանիկ Գևորգյանի հարցազրույցի տեսագրությունը https://www.facebook.com/reel/4057395637907717,

11) «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Արմեն Բախշիի Մանվելյանի հարցազրույցների տեսագրությունները https://www.facebook.com/share/r/17ZNFswrCz/, https://www.facebook.com/share/r/18sH4CAbDd/ ,

12) «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Ցոլակ Արամի Ակոպյանի հարցազրույցների տեսագրությունները. https://www.facebook.com/share/r/17KXkdAFA7/, https://www.facebook.com/share/r/17KXkdAFA7/

13) «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանի տեսանյութը https://www.facebook.com/share/r/19zmqxWaCw/:

Ուսումնասիրելով ներկայացված հանգամանքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

2. Սույն որոշման 1-ին կետում ներկայացված նյութերի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նշված նյութերում ներկայացված հանգամանքները վերաբերվում են ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված թվով երեք հասարակական կազմակերպություններին (այդ թվում՝ համատեղ հանդես եկող) և նրանց դիտորդներին:

3. Սույն որոշման 1-ին կետի 8-10-րդ ենթակետերում ներկայացված հանգամանքներն առնչվում են «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությանը և նրա դիտորդներին:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի ներքո ներկայացված՝ «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ **Գոհար Մելոյանի** հարցազրույցի տեսագրությունը (https://www.youtube.com/watch?v=Ulg6SHdb3us)՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ լրագրողի՝ «Դուք այսօր Վաղարշապատում ի՞նչ օրակարգով եք» հարցին՝ դիտորդ Գոհար Մելոյանը պատասխանում է, ի թիվս, այլնի, որ «օրակարգը արդիական դարձրեց այս երկրի իշխող ուժի ղեկավարը՝ վարչապետը՝ հարձակվելով եկեղեցու վրա... Այս օրերը դառնալու են

դասագրքային օրինակ, թե ինչպես չի կարող գործել որևէ պետության ղեկավար...»: Լրագրողի մեկ այլ՝ «Ես ճի՞շտ հասկացա, որ Դուք կարծում եք՝ ընդդիմադիր ուժի հաղթանակով հնարավոր կլինի կանխել իշխող ուժի արշավը եկեղեցու նկատմամբ» հարցին ի պատասխան դիտորդ Գոհար Մելոյանը նշում է. «Մեր մյուս օրակարգը Վաղարշապատում սպասվող ընտրություններն են ... Եկեղեցու նկատմամբ հետապնդումները ծայրաստիճան հակասահմանադրական, հակաիրավական գործընթաց է, որը թույլ են տալիս այսօրվա իշխանություններն ու իշխանության ներկայացուցիչները»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.11.2025թ. նիստին ներկայացած «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Գոհար Մելոյանը վերոգրյալի կապակցությամբ նշեց, որ նշված հարցազրույցը տվել է 2025 թվականի նոյեմբերի 8-ին, երբ դեռ հավատարմագրված չի եղել կամ առնվազն դրա մասին չի իմացել և որ հավատարմագրված լինելու մասին գրության վերաբերյալ իրազեկվելուց հետո հայտարարել է, որ սկսում է իրականացնել դիտորդական առաքելություն՝ գիտակցելով դիտորդի կարգավիճակը:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետի ներքո ներկայացված՝ «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ **Գառնիկ Դավթյանի** գրառումը (https://www.facebook.com/garnik.m.davt.yan/posts/pfbid02gP2coDaiW9DiiToRsrR4kTWp2NBpmp6JBG7eoEhXr1LRbsJkEutqAYe41dWPSfRjl)՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ գրառմամբ նշված է. «Քաղաքացիական պայմանագիրը այսուհետ կարող է օգտվել այս կարգախոսից. ունիկալ ստախոսությունը դարձել է ՔՊ-ի միակ լավ բանը, որը նրանց մոտ ստացվում է վերջին շրջանում: Անասունների համար նախատեսված՝ Ադրբեջանից բերված ցորենը ժողովրդի վրա որպես «խաղաղություն» վաճառելը՝ առնվազն ոչ մարդկային է, եթե չասեմ՝ ժողովրդին էշի տեղ դնել: Սա, բնականաբար, չի կարելի դիտարկել որպես բալանսավորված տնտեսություն. սա Հայաստանի՝ աստիճանաբար Ադրբեջանից կախվածության միտված քաղաքականություն է:»: Նշված գրառման կապակցությամբ «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Գոհար Մելոյանը նշեց, որ դիտորդ Գառնիկ Դավթյանը գրառում կատարելու պահին իրազեկված չի եղել որպես դիտորդ հավատարմագրված լինելու վերաբերյալ:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետի ներքո ներկայացված՝ «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ **Անդրանիկ Գևորգյանի** հարցազրույցի տեսագրությունը https://www.facebook.com/reel/4057395637907717՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանյութում դիտորդ Անդրանիկ Գևորգյանը նշում է. «Վաղարշապատում ենք և պետք է վաղարշապատցիներին կարևոր մեսիջ ուղղենք, որ պետք է մասնակցել ընտրություններին: Պետք է բարձր

մասնակցություն ապահովել, դա շատ կարևոր է այս պահին, և իրենց քվեն տալ, իրենց ձայնը տալ ընդդիմադիր գործչին, ընդդիմադիր թեկնածուին, ռեալ ընդդիմադիր գործչին: Մենք կանգնած ենք բոլոր այն թեկնածուների կողքին, ովքեր դեմ են ներկայիս իշխանություններին:»: Վերոգրյալի կապակցությամբ «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Գոհար Մելոյանը վերոգրյալի կապակցությամբ նշեց, որ դիտորդ Անդրանիկ Գևորգյանը տեսանյութում ներկայացված գնահատական հնչեցնելուց իրազեկված չի եղել որպես դիտորդ հավատարմագրված լինելու վերաբերյալ:

Գոհար Մելոյանի պնդմամբ՝ որպես դիտորդ հավատարմագրված լինելու վերաբերյալ տեղեկանալուց հետո սույն վարչական վարույթի շրջանակներում մատնանշված դիտորդները որևէ քաղաքական գնահատականներ չեն հնչեցրել, չեն անդրադարձել իշխանության կամ ընդդիմության վերաբերյալ հարցերին: Հակառակը հավաստող ապացույցներ սույն վարչական վարույթի շրջանակներում առկա չեն:

4. Սույն որոշման 1-ին կետի 1-6-րդ և 11-13-րդ ենթակետերում ներկայացված հանգամանքներն առնչվում են «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելությանը և նրա դիտորդներին:

Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի ներքո ներկայացված տեսանյութում՝ https://www.facebook.com/reel/772359382472072 հղմամբ, «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության դիտորդ **Արմեն Մանվելյանը** նշում է. «Եթե դու մարդկանց կերակրում ես ամեն օր կեղծ լուրերով, սենց, հայտնի գեբելսյան պրոպագանդայի սկզբունք կա, չէ՞», «երբ որ դու ամեն օր սուտ ես ասում, մի օր այդ սուտը դառնում է ճշմարտություն», «էս մարդիկ ժողովրդի անունից խոսելու իրավունք էլ չունեն»:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ներքո ներկայացված՝ https://www.facebook.com/reel/647364191790232 հղմամբ զետեղված տեսանյութը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագում է, որ «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ **Ցոլակ Ակոպյանը** տեսանյութում նշում է. «Քանի որ այս իշխանությունը սահմաններ չունի», «սրանք սահման չունեն, սրանք ամեն ինչի պատրաստ են», «սրա դեմ միակ ճանապարհը համախմբված ժողովուրդը պետք է ոտքի կանգնի, սահմանադրական ճանապարհով ճանապարհի», «իրենց մեծ մասի տեղը բանտում է լինելու»: Ներկայացված տեսանյութի վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.11.2025թ. նիստին ներկայացած «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Ցոլակ Ակոպյանը նշեց, որ տեսանյութում ներկայացվում է իր քաղաքացիական դիրքորոշումը, որը չի առնչվում դիտորդությանը:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի ներքո ներկայացված՝ https://www.facebook.com/share/r/1GBgU2tUKo/ հղմամբ զետեղված տեսանյութը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Ավետիք Չալաբյանը նշում է. «Իրավապահնե՛ր, ապօրինի հրամաններ մի՛ կատարեք, դատվելու՛ եք», «էս մարդը երկիրը տանում է

անդունդ, ձեզ էլ հետը», «դիմում գրեք՝ դուրս եկեք», «ընտրություններին կես տարի է մնացել, կես տարուց կվերականգնենք մենք ձեզ»:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի հղման https://www.facebook.com/share/r/15mrMRdNqb/ և 11-րդ կետի առաջին հղման https://www.facebook.com/share/r/17ZNFswrCz/ ներքո ներկայացված տեսանյութերը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ երկու հղումներում ներկայացված է նույն տեսանյութը: Տեսանյութում «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Արմեն Մանվելյանը նշում է. «Մարդիկ պետք է գնան ընտրատեղամասեր, որ իշխանություն փոխվի», «շատ կարևոր է, որպեսզի այն քաղաքական ուժերը, որոնք մասնակցում են, իրենք հասկանան սա և փորձեն միասնաբար գործել», ««Էդ մարդկանց, ի դեպ, դուրս բերելը շատ է օգնում նաև էսօրվա քաղաքական ռեժիմը իր տեռորով, իր ահաբեկչությամբ և շատերին արդեն դա սկսեց զզվացնել, շատերը արդեն անտարբերության իրավիճակից դուրս են գալիս, մտնում են ընդդիմադիր դաշտ», «շատ կարևոր է, որպեսզի քաղաքական դաշտում հայտվեն նոր քաղաքական ուժեր, նոր քաղաքական անուններ, որովհետև մենք նոր քաղաքական մշակույթի կարիք ունենք»:

Սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի ներքո ներկայացված տեսանյութում՝ https://www.facebook.com/share/r/14PPmBRkwzU/?mibextid=wwXIfr հղմամբ, «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության դիտորդ Արմեն Մանվելյանը, խոսելով Հայ Առաքելական եկեղեցու մասին, նշում է. «ոչնչացնել նման ազդեցիկ կառույցին, իհարկե, սա բխում է թուրք, սենց ասեմ, ադրբեջանական տանդեմի և այն քաղաքական ուժերի շահերից, որոնք այս ամենի հետևում կանգնած են»:

Սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի ներքո ներկայացված նյութում՝ https://www.facebook.com/share/p/1AT53b9AEu/ հղմամբ, առկա է «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության դիտորդ **Արեգ Սավգուլյանի** (Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 10.11.2025թ. ստացված դիմումում սխալմամբ նշված է «դիտորդ Արմեն Սավգուլյան») հետևյալ գրառումը. «Ո՛չ Բուդդան էր բուդդիստ, ո՛չ Մարքսը՝ մարքսիստ, և ո՛չ էլ Նիկոլն է նիկոլական, ո՛վ տարաբախտ, երեսպաշտ և մոլորյալ հետևորդներ: Նիկոլիզմն ուղղակի բացեց ազգային ինքնության տիղմի սողանցքը և միջակության հորդաները սկսեցին լերդացած արյան պես հոսել՝ որպես բնաքաղաքական աղետ: ՔՊ-ական ռեալիթի-շոուն դերասանների պակաս ունի: Բացազատված «Ալֆրեդի սենյակում» նույն կերպարները խաղում են և՛ ԱԺ-ում, և՛ Կառավարությունում, և՛ ՔՊ-ում, և՛ հեծանվային փարթիներում, և՛ կեղծ պատարագներում: ՀՀ սահմանադրությամբ ստրկամտությունը և կռապաշտությունը չեն արգելվում, շարունակեք սողալ, իսկ առաջ գոնե «Քայլում» էիք:»:

Սույն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի երկրորդ հղման՝ https://www.facebook.com/share/r/18sH4CAbDd/ ներքո ներկայացված տեսանյութում՝ «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Արմեն Մանվելյանի հարցազրույցի տեսագրության ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն

արձանագրում է, որ տեսանյութում դիտորդ Արմեն Մանվելյանը նշում է. «Էն մարդիկ, ովքեր ադրբեջանցիների անունից գալիս են և խոսում են խաղաղության մասին՝ հայկական ազգանուններով, նրանք բոլորը դավաճաններ են»: Ներկայացված խոսքի ժամանակ ցուցադրվում են ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ վարչապետի նկարները:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի ներքո ներկայացված տեսանյութում՝ «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Ցոլակ Ակոպյանի հարցազրույցի տեսագրությունը՝ https://www.facebook.com/share/r/17KXkdAFA7/ հղմամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանյութում դիտորդ Ցոլակ Ակոպյանը նշում է. ««Իշխանության քայլերը ես չէի ասի ուղղված են միայն Հայ առաքելական սուրբ եկեղեցու դեմ, իշխանության քայլերը ուղղված են ողջ հայ ժողովրդի դեմ, ՀՀ դեմ, այլ հիմնական նպատակը, իհարկե, էս իշխանություններին, նախ՝ իրենք սիրում են շոուներ ապահովել, իրենք փորձում են հասարակությանը հերթական անգամ մոլորեցնել, հասարակությանը հերթական անգամ տանել էն ճանապարհով, որպեսզի կարողանան շոուներով, սենց ինչ որ ֆիլմեր նկարելով հասարակությանը հետաքրքրություն ներկայացնեն իրենց նկատմամբ...»:

Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետի ներքո ներկայացված՝ «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ **Մենուա Սողոմոնյանի** վերաբերյալ տեսանյութը՝ https://www.facebook.com/share/r/19zmqxWaCw/ հղմամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանյութում դիտորդ Մենուա Սողոմոնյանը նշում է. «Փաշինյանը ինչու՞ է հետևողականորեն ապակայունացնում երկրի վիճակը, որովհետև նա գիտակցում է, որ առաջիկա խորհրդարանական հերթական ընտրություններին ժողովուրդը մերժելու է իրեն», «նա պարտվելու է»:

Սույն որոշման 4-րդ կետում ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հնչեցված «արդյո՞ք այս կոնտենտը տարածած էջը «Հայաքվե» դիտորդական առաքելության պաշտոնական էջն է» հարցին ի պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.11.2025թ. նիստին ներկայացած «Հայաքվե» դիտորդական առաքելության լիազոր ներկայացուցիչները նշել են, որ կոնտենտը տարածել է «Հայաքվե» միավորման ֆեյսբուքյան էջը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.11.2025թ. նիստին ներկայացած «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդները նշեցին, որ ներկայացված կոնտենտը զետեղել է «Հայաքվե» անվանմամբ և նույն ապրանքային նշանի ներքո հանդես եկող միավորումը, որը առնչություն չունի «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության հետ: «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության ներկայացուցիչը նշեց, որ թեև «Հայաքվե» անվանմամբ և նույն ապրանքային նշանի ներքո հանդես եկող միավորումը և «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելությունը միմյանց չեն առնչվում, սակայն համացանցում հանդես են գալիս մեկ էջով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հնչեցված մտահոգությունն առ այն, որ նման պայմաններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը զրկված է «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության կողմից

տարածվող կոնտենտը գնահատելու հնարավորությունից, «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության դիտորդները նշեցին, որ կիսում են նման մտահոգությունները և պատրաստակամություն հայտնեցին զերծ մնալ վերը նշված ձևաչափով հանդես գալուց՝ գիտակցելով, որ նույնանուն և նույն ապրանքային նշանով հանդես եկող միավորման կողմից տարածվող նյութերը կարող են տարաբնույթ ընկալման առիթ հանդիսանալ, հանգեցնել ոչ միանշանակ գնահատականների և ընկալումների՝ կասկածի տակ դնելով «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության դիտորդների անկողմնակալությունն ու չեզոքությունը:

5. Սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում ներկայացված հանգամանքներն առնչվում են «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան» հիմնադրամին և վերջինիս գործադիր մարմնի ղեկավար Արման Թաթոյանին: Նշված հղումների ուսումնասիրությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ առկա որոշ տեսանյութեր կրկնվում են: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի ներքո ներկայացված հղումներում առկա տեսանյութերը, արձանագրում է, որ տեսանյութերում Արման Թաթոյանը, մասնավորապես, նշում է.

1) «Արծվաշենը վերադարձնելու Փաշինյանի խրոխտ հայտարարությունը իրականում բազմաթիվ մարդկանց անտուն թողնելու մասին է: Արցախից լավ են սովորել: Նրանք անընդհատ խոսում են Ադրբեջանին տարածքներ ոչ թե իբր «հանձնելու», այլ «վերադարձնելու» մասին, բայց իրականում բզկտում, քրքրում են Հայաստանի անվտանգության ամբողջ համակարգը: Ես կոնկրետ օրինակով և ապացույցով ցույց կտամ, թե ինչ է սպառնում, սպասվում Հայաստանին, եթե տեղի ունենա անկլավների և տարածքների փոխանակման այս արհեստական ծրագիրը: 2020 թվականից հետո Ադրբեջանը ինտենսիվացրեց Տիգրանաշենի, Արծվաշենի, ինչպես նաև Տավուշում անկլավային գյուղերի ու տարածքների փոխանակման կամ վերահսկողության հանձնման ծրագրի մասին քննարկումները: Դրանից հետո Փաշինյանը, ՔՊ-ականները, իրար հերթ չտալով, անընդհատ խոսում էին սրա մասին: Բայց իրականում՝ սա ամբողջ Հայաստանը շրջափակման մեջ գցելու, մեր սահմանները ավիրելու, բզկտելու ծրագիր է:» Տեսագրության մեջ Թաթոյանը ներկայացնում է մտահոգություն այն մասին, որ սահմանային փոփոխությունների դեպքում՝ Հայաստանը կարող է կորցնել իր հիմնական միջպետական ճանապարհների վերահսկողությունը:

2) «Փչացած ժամացույցը օրը 2 անգամ է ճիշտ ժամ ցույց տալիս: Ինձ թվում է՝ նույն կերպ էլ Փաշինյանն ու ՔՊ-ն: Օգոստոսի 8-ից հետո՝ ընդհանրապես օրացույց չեն շրջում, որ ստիպված չլինեն խոսել Ադրբեջանի կողմից Վաշինգտոնում ստորագրված պայմանագրի խախտումների մասին: Իսկ ես ՔՊ-ի համար նոր փաստեր ունեմ, և հստակ արձանագրում եմ, որ այդ փաստերը հստակ ապացուցում են, որ «Արևմտյան Ադրբեջան» զավթողական անվանումով կազմակերպության գործունեությունն ավելի է ինտենսիվանում, իսկ այդ զավթողական ռազմավարությունը նոր թափ է հավաքում: Ընդամենը երեկ տեղի է ունեցել այս խոշոր միջոցառումը (ցուցադրվում է լուսանկար), որը

կազմակերպվել է Ադրբեջանի նախագահի հովանավորությամբ, և այստեղ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնատար անձինք գոհունակությամբ արձանագրել են, որ «Արևմտյան Ադրբեջան» թեմայով նախագծերի որակական և քանակական ցուցանիշները էական բարելավում ունեն . . . »:

Թաթոյանը ներկայացնում է նշյալ կազմակերպության վիճակագրական տվյալներ՝ նշված ցուցանիշների վերաբերյալ:

«Փաշինյանը այդպես էլ չկարողացավ մեր երկրի համար օգտագործել ԱՄՆ-ի նման պետության հեղինակությունն ու միջնորդական առաքելությունը. . . ազնիվ է, որ մեր ամերիկացի գործընկերներն իմանան, որ Ադրբեջանը խաթարում է, ոտնահարում է նրանց վստահությունն ու հեղինակությունը աշխարհում, իսկ Փաշինյանը նպաստում է դրան, որովհետև կոծկում է իրականությունը և ամեն ինչ անում է, որ Ադրբեջանը հասնի այդ կերպ իր նպատակներին ...»

3) Վարչապետի պաշտոնը զբաղեցրած անձը մտել է մարդկանց տներ, զբաղված է սկանդալների փնտրտուքով, օրենքների կոպիտ խախտումներով, կատարում է արարքներ, որոնք սկզբունքորեն հակասում են Վարչապետի կարգավիճակին: Հոգևորականին վերագրվող տեսանյութի հետ կապված՝ անկախ նրանից՝ կեղծ է, թե կեղծ չի, ուզում եմ հստակ ասել, որ գործում է հանցավոր, այլանդակ սխեմա: Նախ, Փաշինյանի համար կա մեկ գերխնդիր՝ ինչ անել և ինչպես անել, որպեսզի կարողանա պահպանել Վարչապետի պաշտոնը: Իսկ այդ խնդիրը լուծելու համար նա պետք է կատարի Ադրբեջանի պահանջները, որոնցից գլխավորը՝ Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու ոչնչացումն է: Նրանք մեր եկեղեցին հայտարարել են հինգերորդ շարասյուն, թշնամական կառույց: Փաշինյանը այս խնդիրը լուծելով՝ նաև եկեղեցին փորձում է դարձնել ՔՊ-ի քարոզիչ կամ ՔՊ-ի կցորդ»:

Նշվում է, որ իշխանությունն ու վարչապետ Փաշինյանը նպատակային և ծրագրավորված կերպով օգտագործում են իրավապահ մարմիններին՝ իրենց քաղաքական հակառակորդների անձնական տվյալները հավաքելու համար:

4) «Կիրակի օրը Հովհաննավանքում Փաշինյանի անմիջական կազմակերպմամբ կատարվելու են արարքներ, որոնք հանցագործություն են: Այս արարքների կատարմանը նա նաև ներգրավվել է արդեն նախկին հոգևորական կարգալույծ հռչակված Ստեփան Ասատրյանին»: Տեսագրության մեջ Թաթոյանը անդրադառնում է «երեք կեղծիքի, որոնք տարածում է անձամբ Փաշինյանը և «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության պատգամավորները»:

Սույն կետում նշված հանգամանքների կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.11.2025թ. նիստին ներկայացած՝ «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան» հիմնադրամի դիտորդ Արմեն Գալստյանը նշեց, որ «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան» հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար Արման Թաթոյանը հավատարմագրված դիտորդ չէ և ազատ է ներկայացնելու իր գնահատականները և դիրքորոշումները: Միաժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հնչեցրեց հարց. արդյո՞ք «Իրավունքի և արդարության կենտրոն

Թաթոյան» հիմնադրամի էջով այդ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար Արման Թաթոյանի հայտարարությունները տարածելը կարող է ընկալվել որպես նույնանուն դիտորդական առաքելության դիրքորոշում: Հարցին ի պատասխան Արմեն Գալստյանը նշեց, որ կիսում է նման մտավախությունը: Միաժամանակ հայտնեց, որ կիսում է նաև «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդ Ավետիք Չալաբյանի կողմից արտահայտած մոտեցումը, որ դիտորդի, դիտորդական առաքելության իրավական կգավիճակի հետ կապված օրենքի մեկնաբանության անհրաժեշտություն կա:

6. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

3. Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:»:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվում է, որպեսզի հավատարմագրվելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները ներկայացնեն իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք

է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:»: Միաժամանակ, Ընտրական օրենսգրքով սահմանված են նաև դիտորդի լիազորությունների դադարման հիմքերը (Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 6-րդ մաս, 31-րդ հոդվածի 4.1-րդ մաս և այլն):

Ընտրական օրենսգրքով սահմանված են նաև դիտորդների իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող սահմանափակումներ: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Դիտորդը, այցելուն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով: Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները:»:

Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի երրորդ պարբերության 14-րդ կետի համաձայն՝ արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝ դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները.

1) որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր,

2) որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ՝ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ ընտրություններին՝ թեկնածուի կարգավիճակով,

3) որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին,

4) որոնք հավատարմագրվելու վերաբերյալ իրենց դիմումը ներկայացնելիս ներկայացրել են իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին:

Նշված բոլոր պահանջների պահպանումը պարտադիր է, և դրանց չպահպանելը հանգեցնում է հավատարմագրվելու մասին դիմումը մերժելուն, իսկ դիտորդական առաքելությունը հավատարմագրված լինելու դեպքում՝ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելուն:

Այսպես, Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4.1-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր: Եթե սույն մասում նշված դեպքում համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը՝ միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը մի մասով ուժը կորցրած ճանաչվելու արդյունքով սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ կազմակերպություն, ապա այդ կազմակերպությունը համարվում է հավատարմագրված, որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:

Սույն հոդվածի 1.1-ին մասում առկա հանգամանքները դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումից հետո ի հայտ գալու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրված դիտորդների ցանկից հանում է որպես դիտորդ հանդես գալու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալները: …»:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում քննվող հանգամանքների վերաբերյալ նյութերի ուսումնասիրությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված նյութերը վերաբերվում են ՀՀ Արմավիրի մարզի

Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածին, որը մեկնարկել է 2025 թվականի հոկտեմբերի 22-ին և ավարտվել 2025 թվականի նոյեմբերի 15-ին:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի իմաստով՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:»:

Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կարգավորումը, առ այն որ չպետք է աջակցեն թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, որպես դիտորդի վարքագծի դրսևորման իրավական հիմք սահմանված է նաև Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության 14-րդ կետի և 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներում:

Այսպիսով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ.

1) դիտորդն իր՝ որպես դիտորդի իրավական կարգավիճակը ձեռք է բերում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո,

2) դիտորդը պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ,

3) դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպությունները և դիտորդներն իրավունք չունեն կազմակերպել ու իրականացնել նախընտրական քարոզչություն:

Նշված արձանագրումները թույլ են տալիս եզրակացնելու, որ եթե հավատարմագրվելուց հետո չեն պահպանվում Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության 14-րդ կետի և 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ապա տվյալ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը կորցնում է դիտորդական առաքելություն իրականացնելու իր իրավունքը:

Սույն վարչական վարույթի շրջանակներում ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ և արձանագրված փաստական հանգամանքների գնահատմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ հավատարմագրված թվով երեք հասարակական կազմակերպությունների՝ Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության, «Հայաքվե» համատեղ դիտորդական առաքելության և «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան» հիմնադրամի և վերջիններիս դիտորդների կողմից ձեռնարկվել են պատշաճ միջոցներ հնարավոր խախտումները կանխելու ուղղությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված սույն վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**